

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Հայ-Ռուսական համալսարանի
գիտության գծով պրոռեկտոր
Վ.Գ.Դ., պրոֆեսոր
Ս. Ավետիսյան
«12» հոկտեմբերի 2021թ.



ԿԱՐԾԻՔ

Արտակ Արտուշի Մարտիրոսյանի «Գյուղատնտեսության ավազակազրության ներդրման արդյունավետության գնահատման մոտեցումները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ատենախոսությունը քննարկվել է Հայ-Ռուսական համալսարանի «Էկոնոմիկայի և ֆինանսների» ու «Տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների» ամբիոնների 2021 թվականի հոկտեմբերի 12-ի համատեղ նիստում (արձանագրություն թիվ 11-21):

Մասնակցում էին՝

- Սանդոյան Էդվարդ Մարտինի՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., Ներսեսյան Կարեն Վասիլիի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Ոսկանյան Մարիամ Համբարձումի՝ տնտեսագիտ. դոկտոր, դոցենտ, «Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի վարիչ, Զախոյան Էլիզա Միքայելի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Կարապետյան Էդգար Գագիկի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Քառյան Արա Վլադիմիրի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Հայրապետյան Վիկտորիյա Լեոնիդի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Հանիսյան Հրայր Հովիկի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Պետրոսյան Իրինա Բորիսի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, «Տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների» ամբիոնի վարիչ, Տիգրանյան Վարսիկ Իշխանի, տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Մնացականյան Լիդա Արմենի՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, Հակոբյան Էսթեր Աշոտի՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, Հակոբյան Արմինե Արզումանի՝ ավագ դասախոս, Աղաջանյան Արմինե Վլադիմիրի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Գալստյան Անի Համլետի՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, Նաշիկյան Լիլիա Աշոտի՝ դասախոս, Սարգսյան Լիլիթ Կարենի՝ դասախոս:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ագրոապահովագրությունը ունենալով շահառուների լայն շրջանակ՝ այսուհանդերձ ՀՀ-ում դանդաղ է զարգանում, որի պատճառներից մեկը ապահովագրական ինստիտուտի ներդրման արդյունավետության գնահատման հայեցակարգային մոտեցումների բացակայությունն է: Մասնավորապես, դեռևս իրենց լուծումներին են սպասում ապահովագրության ներդրման արդյունավետ քաղաքականության հայեցակարգի մշակումը, գյուղատնտեսության ապահովագրության արդյունավետության չափելիության համակարգի ստեղծումը, ապահովագրական ռիսկերի զսպման շահադրոյիզ համակարգի ձևավորումը, շահառուների շրջանում թափանցիկ տեղեկատվության և հաշվետվողականության համակարգի կիրառումը:

Գործնականում բարդություններ են առաջանում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման արդյունավետության ֆինանսական գնահատման առումով: Ներկայումս ապահովագրական գործընթացին առնչվող տարբեր շահառուներ դեռևս չեն կարողանում հասկանալ, թե ինչ տնտեսական հետազոտ է թողնում ապահովագրական գործընթացը, և թե ինչ չափով է այն անդրադառնում իրենց գործունեության վրա, քանի որ երկրում չի կիրառվում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման արդյունավետության գնահատման համակարգային մոտեցում: Ընդամենը ապահովագրության պայմանագրային կողմեր հանդիսացող ապահովադիրն ու ապահովագրողն են գնահատում գործարքի արդյունավետությունը, որից դուրս են մնում գործընթացին առնչվող մյուս շահառուների գնահատումները:

Հետևաբար, արդիական է գյուղատնտեսության ապահովագրության գործընթացի հաշվետվողականության համակարգի ֆինանսական ցուցանիշների թափանցիկության ներդրումը և հետադարձ կապի ապահովումը, որն էլ, իր հերթին, պահանջում է ապահովագրական արդյունքների հստակ հաշվառում և ստացված տեղեկատվության հասցեագրում բոլոր շահառուներին: Հատկապես, կարևորվում է ապահովագրության հաշվետվողականության բարելավումը, որը հնարավորություն է տալիս շահառուներին՝ արդյունավետ որոշումների կայացման և դրանց հետևողական իրագործման համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության նպատակն է մշակել և ներկայացնել ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման արդյունավետության որակական և ֆինանսական գնահատման բարելավված մեթոդաբանություն, որը հնարավորինս հաշվի կառնի ապահովագրական գործընթացին առնչվող շահառուների նպատակադրումները և դրանց հասանելիության մեկնաբանությունները վերլուծության տեսանկյունից:

Ելնելով հետազոտության նպատակից, ատենախոսությունում առաջադրվել են հետևյալ խնդիրները,

- մշակել գյուղատնտեսության ապահովագրության ներդրման արդյունավետության գնահատման հայեցակարգ, որը հնարավորություն կընձեռի համակողմանի վերլուծելու ապահովագրական գործընթացի տարբեր շահառուների սպասումների բավարարման աստիճանը և օժանդակելու ապահովագրական գործընթացի ակտիվացման մոտիվացիոն լծակների կիրառմանը,
- առաջարկել գյուղատնտեսական ապահովագրության ներդրման արդյունավետության գնահատման ցուցանիշներ, որի արդյունքում կձևավորվի արդյունավետության վերլուծության համեմատական վերլուծության հնարավորություն,
- առաջարկել ներդրման արդյունավետությունը գնահատող համակարգ, համախմբելով գյուղատնտեսության ապահովագրության բոլոր շահառուների ոլորտային սպասումները, արձանագրելով ապահովագրական գործընթացի փաստացի վերջնարդյունքները, բացահայտելով շահառուների սպասումներից ապահովագրության փաստացի վերջնարդյունքների շեղումները,
- գյուղատնտեսական ապահովագրության ներդրման արդյունավետության գնահատման համար կիրառել միասնական չափելիություն, որը հնարավորություն կընձեռի իրականացնելու համեմատական վերլուծություն,
- ներկայացնել գյուղատնտեսության ապահովագրության հաշվետվողականության մեխանիզմ, հետադարձ կապ ապահովելով ապահովագրական գործընթացի

շահառուների միջև, և դրանով իսկ նպաստելով ապահովագրության ներդրման արդյունավետության բարձրացմանը միտված որոշումների կայացմանը:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության մեջ առաջադրված խնդիրների լուծման նպատակով իրականացված վերլուծությունների ու հետազոտությունների արդյունքում ստացվել են տեսական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից ըստ հեղինակի գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթներն են.

- ✓ ներկայացվել է գյուղատնտեսության ապահովագրության արդյունավետության գնահատման հայեցակարգային մոտեցում, միտված ինչպես ապահովագրական գործընթացի շահառուների նպատակադրումների և դրանց փաստացի ձևավորման ցուցանիշների համախմբմանը, այնպես էլ ապահովագրական գործընթացի կայունության ֆինանսական վերլուծության մեթոդաբանության բարելավմանը,
- ✓ մշակվել է գյուղատնտեսության ապահովագրության ներդրման արդյունավետության գնահատման մեխանիզմ, որը հաշվի է առնում ինչպես ֆինանսական ռեսուրսներով ապահովվածության գնահատումը, այնպես էլ ապահովագրական գործընթացի շահառուների նպատակադրումներն ու դրանց շեղումների փաստացի ցուցանիշները,
- ✓ մշակվել և ներկայացվել են շահառուների տարբեր խմբերի ապահովագրական հատույցի ցուցանիշներ, որոնց հիման վրա հնարավորություն է ստեղծվում կատարելու գյուղատնտեսության ապահովագրության ներդրման արդյունավետության համապարփակ գնահատում,
- ✓ մշակվել և ներկայացվել է գյուղաապահովագրության ֆինանսական տեղեկատվական հոսքերի համակարգման և հաշվառման մոտեցում, ինչը հնարավորություն է տալիս կառավարչական հաշվետվության միջոցով վերահսկել և վերլուծել ֆինանսական հոսքերի նպատակայնությունն ու արդյունավետությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության արդյունքները, կատարված առաջարկությունները, մշակված մոտեցումները և մեթոդները կարող են գործնական կիրառություն գտնել ՀՀ գյուղատնտեսության ապահովագրության ոլորտում վարվող քաղաքականությունում՝ նպաստելով ապահովագրավճարների հավաքագրման և վերաբաշխման գործընթացի բարելավմանը, ագրարային ոլորտի ապահովագրական ծածկույթի ընդլայնմանը, ինչպես նաև ապահովագրության շահառուների գործողությունների մոտիվացմանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունների բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Դրանում ներառված են 12 գծապատկեր և 19 աղյուսակ: Նյութը շարադրված է 124, օգտագործված գրականության ցանկը՝ 8, իսկ հավելվածը՝ 10 էջում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը արդյունքների գիտագործնական և կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Գյուղատնտեսության ապահովագրության ֆինանսավորման և զարգացման միտումները ՀՀ-ում» գլխում վերլուծվում են ապահովագրական զարգացման գործընթացը, խոչընդոտներն ու դրանց վերացման միջազգային փորձը:

Գյուղատնտեսության ապահովագրության կազմակերպման միջազգային փորձի ուսումնասիրությունը, ցույց է տալիս, որ դեռևս իր կիրառությունը չի ձևավորվել ապահովագրական այնպիսի մոդել, որը իր առավելությունների հետ մեկտեղ, չունենա նաև որոշակի թերություններ: Այսպես, երբ ապահովագրական գործընթացի

կազմակերպման և վնասների փոխհատուցման ծանրության կենտրոնը ընկնում է պետության վրա, ապա այն բավականին մեղմում է լայնածավալ գյուղատնտեսական կորուստների փոխհատուցման ֆինանսական ռիսկերը: Սակայն, մյուս կողմից, եթե ապահովագրական ռիսկերը պետությունը ամբողջությամբ վերցնում է իր վրա, ապա դա մի կողմից մեծ բեռ է դառնում պետական բյուջեի վրա, և մյուս կողմից, ապահովագրական դաշտը դարձնում ոչ մրցակցային: Եվ ավելին, պասիվացնում է ֆերմերների գործունեությունը՝ հնարավոր վնասների կանխարգելիչ միջոցառումների իրականացման ոլորտում, քանի որ գյուղատնտեսները իրենց առավել ապահով են զգում պետական աջակցման պարագայում:

Ատենախոսության երկրորդ՝ **«Գյուղատնտեսության ապահովագրության ներդրման արդյունավետության ֆինանսական գնահատման հիմնախնդիրները»** գլխում իրենց մեկնաբանություններն են ստանում ապահովագրական գործընթացի արդյունավետության գնահատման մոտեցումները տարբեր շահառուների տեսանկյունից: Իրենց փոխկապակցվածությամբ ներկայացնել գյուղատնտեսության ապահովագրության արդյունավետ քաղաքականություն ապահովող առանձին բաղադրիչները: Ապահովագրության արդյունավետ կազմակերպման մեխանիզմը ապահովագրական ծածկույթի, ապահովագրավճարների ձևավորման, վնասների փոխհատուցման, ստանձնած պայմանագրային պարտավորությունների կատարման, ապահովագրական գործունեության կայունության և մոտիվացիայի գործիքակազմի կիրառման ու կանոնակարգման, տեղակատվության ապահովման և հաշվետվողականության սկզբունքների համախմբված փոխկապակցումն է, ուղղված ապահովագրության նպատակադրումների լիարժեք իրագործմանը:

Ատենախոսության երրորդ՝ **«Գյուղատնտեսության արդյունավետ ապահովագրության ֆինանսական գործիքակազմի կարարելագործումը»** գլխում ներկայացվում են ապահովագրական գործընթացի ֆինանսական կայունության արդյունավետ կառավարման ուղիները: Առաջարկվել է ֆինանսական կայունության պաշարի գնահատման նոր մոտեցում, որի դեպքում հաշվի է առնվում ապահովագրական գործընթացի շահառուները ուղղակի կամ անուղղակի ճանապարհով մասնակցության

չափաբաժինը ապահովագրական գործընթացի ֆինանսական հոսքերի ձևավորման գործընթացին: Այսինքն, ի նկատի են առնվում այն ֆինանսական հոսքերը, որոնք նպաստում են ապահովագրական գործընթացն առնչություն ունեցող ապահովադիրի ֆինանսական բեռի:

«Եզրակացություն» բաժնում ամփոփվել և համառոտ ներկայացվել են հետազոտության վերաբերյալ հիմնական եզրակացությունները:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսությունում առկա են մի շարք թերություններ, որոնց մեջ կարևորում ենք առանձնացնել հետևյալները՝

1) Գիտական նորոյթի 1-ին կետում հեղինակը առաջարկել է «գյուղատնտեսական ապահովագրության արդյունավետության գնահատման հայեցակարգային մոտեցում», որը, որպես այդպիսին, չի կարող դասվել նորոյթների շարքին, քանի որ նշված մոտեցումը մասնագիտական գրականության մեջ առկա է (որի մասին ատենախոսը նշում է): Այլ բան է, եթե հեղինակը մշակեր և հիմնավորեր, թե այդ մոտեցման մեջ ինչ նոր առանցք է ներմուծել, ինչ նպատակով և ինչով է այն հիմնավորվում:

2) Գիտական նորոյթի 2-րդ կետում նշված է՝ «գնահատվել է ապահովագրական ընկերությունների ֆինանսական ռեսուրսներով ապահովվածության աստիճանը»: Առաջինը՝ անհասկանալի է, ինչ է դա նշանակում: Նման գնահատման ցուցանիշ ապահովագրության մասնագիտական գրականությունում և փորձագիտական ոլորտում գոյություն չունի: Կարող է լինել ապահովագրական ընկերության կապիտալի մեծության ցուցանիշը, կապիտալի համարժեքության ցուցանիշը, վճարունակության ցուցանիշը, ռիսկ ստանձնելու կարողության ցուցանիշը: Ի գիտություն ատենախոսի, հարկ է նշել, որ ապահովագրողի համար ֆինանսական ռեսուրսներով ապահովվածությունը, օրինակ՝ կարող է նշանակել, արդյոք ապահովագրողը ունի օրենսդրությամբ սահմանված բավարար կապիտալ, որպեսզի ստանա գործունեության լիցենզիա, կամ ռիսկ ստանձնելու համար բավարար կապիտալ:

3) 2.1.1. գծապատկերում նշված է «օգտակար մնացորդի արժեք» հասկացությունը, հարկ է ներկայացնել, ինչ է դա նշանակում, ինչի մնացորդի արժեքն է այն:

4) Ատենախոսության 3.2 ենթաբաժնում ատենախոսը զուգահեռներ անցկացնելով ԱՊՊԱ-ի և գյուղապահովագրության միջև, նշելով Բյուրոյի կարևորության մասին, առաջարկում է նման կառույց ստեղծել գյուղապահովագրության համար, մոռանալով նշել, որ ԱՊՊԱ-ն օրենքով պարտադիր ապահովագրության տեսակ է, որի հետ կապված առաջանում է մի շարք ենթակառուցվածքների այդ թվում՝ բյուրոյի, միասնական տեղեկատվական բազայի, երաշխիքային հատուցման ֆոնդի գործունեության անհրաժեշտությունը:

5) Ատենախոսության 98-րդ էջում հեղինակը նշում է, ինչ չափաբաժնով են օգտագործվել ֆինանսավորող հանրային և մասնավոր շահառուների «ֆինանսական պաշարները»: Հարցադրման մեջ անհասկանալի է «ֆինանսական պաշարներ» արտահայտությունը: Ըստ կոնտեքստի այն վերաբերվում է տարբեր ֆինանսական հոսքերին, ըստ այդմ, այն ինքնին սխալ է, քանի որ հեղինակը չի տարանջատել ապահովագրավճարի սուբսիդավորումը և վնասի հատուցմանն ուղղվող ֆինանսական փոխհատուցումները: Եթե ապահովագրության բոլոր ֆինանսական հոսքերը խառնենք իրար, ապա ոչ մի ապահովագրություն չի ստացվի:

6) Անհասկանալի է ՖՀՄՍ 17-րդ ստանդարտի մեջբերումը և դրա մեկնաբանումը կապված գյուղերքի ապահովագրության ռիսկերի հետ /էջ 98/: Գյուղերքի ապահովագրության ռիսկերի արձանագրումը ֆինանսական հաշվետվությունների ՖՀՄՍ 17-րդ ստանդարտի որոնէ կապ չունի:

7) Ինչ վերաբերվում է էջ 99-ում տեղ գտած առաջարկին, որը վերաբերվում է ապահովագրավճարների մուտքերի և պատահարների փոխհատուցման դրամական հոսքերի հաշվետվության կիրառման անհրաժեշտությանը, ապա նշենք, որ, առաջինը, ապահովագրության հիմքում ընկած է կորուստների տրոհումը (pooling of losses), երկրորդ, ապահովագրությունում կիրառվում է վնասաբերության ցուցանիշը և ապահովագրողները այն կառավարչական հաշվառման մեջ պարտադիր հաշվի են առնում: Հարկ է ուսումնասիրել այդ ամենը, որից հետո հեղինակը կստանա իր հարցադրումների բոլոր

հարցերի պատասխանները: Ապահովագրիչներն ու այլ շահառուները իրենց շահերի պաշտպանության առումով ապավինում են վնասաբերության ցուցանիշին, որը շատ ցայտուն ցույց է տալիս հեղինակի մտահոգության առարկա հարցի պատասխանը: Մեր իրականության մեջ էլ է դա այդպես: Ի դեպ, վնասաբերության ցուցանիշը ապահովագրողները հաշվում են ըստ առանձին պրոդուկտների և երբեմն այն կարող է գերազանցել 100 տոկոսը, որը նշանակում է, որ ապահովագրական ընկերությունը հատուցումները իրականացնում է իր սեփական միջոցների հաշվին, և այդպես լինում է հաճախ: Կրկին ամենակարևորը՝ ապահովագրությունը դա կորուստների տրոհում է (pooling of losses) և դա է ելակետը:

8) Ինչ վերաբերվում է հեղինակի կողմից առաջարկվող դրամական ներհոսքի և արտահոսքի հաշվեկշռմանը, որը ներկայացված է 3.2.2 աղյուսակում, ապա հարկ է նշել, որ նման հաշվեկշռում ոչ տեսականորեն, ոչ էլ գործնականում իրականացվելի չէ: Հաշվեկշռի ծախ մասը անվանվել է «ներհոսք», որտեղ ապահովագրավճարներն են, դրա հնարավոր բոլոր տեսակի սուբսիդավորումներով, աջ մասը անվանվել է «դրամական արտահոսք»: Այդ մասում հատուցման բաղադրիչներն են և նշված են նաև կարգավորման ծախսերը և ապահովագրական ռիսկերի զսպման ծախսերի փոխհատուցումը: Վերջինս ապահովագրության տերմինաբանությամբ անվանում են «կանխարգելիչ ապահովագրական պահուստ և ծախսեր» («ռիսկերի զսպման ծախսեր» տերմին գոյություն չունի): Կրկին տերմինների խառնաշփոթ է, որն ամեն ինչ խճճում է:

Դրամական ներհոսքի և արտահոսքի հաշվեկշռման առումով պետք է նշել, որ հաշվեկշռի ստանալու համար հարկ է հաշվի առնել նաև մնացած բոլոր ոչ պակաս ծախսերը, այն է՝ ընկերության գործառնական ծախսերը՝ աշխատավարձ, ռիսկերի գնահատում և այլն, դրանք երկար կարելի է թվարկել: Դրանց իրականացման աղբյուրը ապահովագրավճարներն են և դրանք պետք է հաշվարկել յուրաքանչյուր պրոդուկտի գծով, այնպես որ առաջարկվող հաշվեկշռումը չի ստացվի:

9) Հստակեցման կարիք ունի «գյուղաապահովագրության ֆինանսական հոսքերի» հաշիվ հասկացությունը /էջ 101-102/: Հարց է առաջանում, որտեղ է այն ներմուծվելու, արդյոք ընկերության հաշվային պլանում: Այդ դեպքում անհասկանալի է, ինչու

«գյուղաապահովագրության ֆինանսական հոսքերի» հաշիվ, քանի որ դրա դեբետում ըստ հեղինակի ապահովագրական արտահոսքն է, իսկ կրեդիտում ապահովագրական ներհոսքը: Ըստ այդ տրամաբանության դա կարող է լինել ցանկացած ապահովագրության համար, այլ ոչ թե գյուղաապահովագրության համար: Մյուս հարցն այն է, որ այդ հաշիվը կարծես իրենից ներկայացնում սինթետիկ հաշիվ, որի շատ բաղադրիչներ բացակայում են: Ինչպես է այդ հաշիվը թղթակցելու այլ հաշիվների հետ, մասնավորապես, «ընթացիկ եկամուտներ և ծախսեր» հաշվի հետ: Ապահովագրողների վրա նման փորձարկումներից առաջ հարկ է հասկանալ, թե ինչ է ցանկանում հեղինակը տեսնել, եթե դա ֆինանսական հաշվառման ասպեկտ է, /տեքստից անհասկանալի է առաջարկը ֆինանսական, թե կառավարչական հաշվառման մասին է, տես՝ էջ 100/, ապա դա ուղղակի չի ստացվում, եթե այն կառավարչական հաշվառման համար է, ապա կրկին բազմաթիվ բաց հարցեր են մնում:

10) Ատենախոսության 104 էջում հեղինակը նշում է, որ իր առաջարկած կառավարչական հաշվառմամբ մեկնաբանվում է գյուղատնտեսության ոլորտի ապահովագրության ֆինանսական ներուժը և դրա օգտագործման աստիճանը: Առաջին, հեղինակի ուշադրությունը հրավիրում ենք այն հանգամանքի վրա, որ գյուղատնտեսության ոլորտի ապահովագրությունը ընդհանրական հասկացություն է և այս առումով խոսել դրա ֆինանսական կամ կառավարչական հաշվառման մասին ուղղակի անտեղին է: Գյուղատնտեսության ոլորտի ապահովագրություն ասվածը իր մեջ ներառում է՝ գյուղբերքի ապահովագրությունը (Crop Insurance), գյուղտեխնիկայի, շինությունների և այլնի ապահովագրությունը: Աշխատանքի կոնտեքստից հասկացվում է, որ հեղինակը նկատի ունի գյուղբերքի ապահովագրությունը (Crop Insurance), ամբողջ տեքստում հարկ է ուղղել այն:

Երկրորդ, հեղինակին առաջարկում ենք որպեսզի սահմանի «ապահովագրության ֆինանսական ներուժ» հասկացությունը, որից հետո պարզ կլինի, թե ինչ ի նկատի ունի հեղինակը, քանի որ «ապահովագրության ֆինանսական ներուժ» ասվածը շատ ընդհանրական է:

11) Ատենախոսության 104-րդ էջում նշվում է «գյուղապահովագրության ֆինանսական հոսքերի արդյունավետության ցուցանիշ» հասկացություն, այն է՝ հեղինակի կողմից սահմանված ներհոսքի և արտահոսքի հարաբերակցությունը: Նախ՝ «ֆինանսական հոսքի արդյունավետություն» ասվածը անհասկանալի է, այն կարող է լինել դրական, բացասական, գրոյական: Դրանով կարելի է դատել ապահովագրության առանձին պրոդուկտի, ընկերության արդյունավետության մասին և ոչ թե հոսքի արդյունավետության մասին:

Ի դեպ նշենք, որ ապահովագրավճարների սուբսիդավորումը բուն ռիսկի ապահովագրության կառավարման հետ որևէ կապ չունի: Չնայած որ միջազգային պրակտիկայում այն ընդունված մոտեցում է, այն ըստ էության չի բարձրացնում ռիսկի կառավարումը, այն ընդամենը հնարավորություն է տալիս ապահովագրիչների համար դյուրինացնել ծառայության մատչելիությունը և, մյուս կողմից, մեծացնել պրոդուկտի ապահովագրական փուլը, որը ևս շատ կարևոր է:

12) Ատենախոսության 105-րդ էջում հեղինակի մեկնաբանությունը չի դիմանում քննադատությանը, քանի որ նա նշում է, որ եթե ներհոսքը գերազանցի արտահոսքին, ապա ապահովագրիչների տեսանկյունից այն կդիտվի անարդյունավետ և ֆերմերների համար ավելորդ բեռ կդառնա: Եթե թարգմանենք մասնագիտական լեզվով, դա նշանակում է, որ տվյալ տարում վնասաբերության ցուցանիշը ցածր կլինի և ապահովագրողը իսկապես կստանա գերշահույթ, սակայն գյուղերքի ապահովագրությունում հաջորդ տարի պատկերը կարող է լինել լրիվ հակառակը և վնասաբերության ցուցանիշը կգերազանցի 100 տոկոսը: Դրա համար գյուղերքի ապահովագրության ոլորտում հայտնի են նման իրավիճակի լուծման կառուցակարգեր, որի մասին հեղինակը ուղղակի լավատեղյակ չէ: Ինչ վերաբերվում է ֆերմերների, գյուղացիական տնտեսությունների շահերին, ապա նրանց հիմնական մտահոգության խնդիրը հատուցում սատանալն է, իսկ մինչ պայմանագրի կնքումը ապահովագրական գումարի կամ ծածկույթի /ֆրանշիզայի/, և չահուտոցվող գումարի չափն է:

13) Հեղինակի կողմից ներկայացված 3.3.1 գծապատկերում, որտեղ պատկերված են ապահովագրության ֆինանսական կայունության բաղադրիչները, չգիտես ինչու

բացակայում են ապահովագրական պահուստները կամ ավելի մասնագիտական լեզվով ասված, տեխնիկական պահուստները: Ընդհանրապես, ամբողջ տեքստում ապահովագրական պահուստների մասին ոչ մի խոսք չկա:

3.3.1 աղյուսակում հեղինակը, ներկայացնելով ապահովագրողների ֆինանսական վիճակը, իր կողմից կազմված ցուցանիշներով, դրանց շարքում չի ներկայացնում ընկերությունների ընդհանուր կապիտալը և ապահովագրական պահուստները: Ներկայացված է կանոնադրական կապիտալի մեծությունը, սակայն հարկ է նկատել, որ այն անփոփոխ մեծություն է, ընկերության իրական վիճակը բնութագրում են նրա ընդհանուր կապիտալը և, մյուս կողմից, ապահովագրական պահուստները:

Գյուղերքի ապահովագրության գծով որևէ ընկերության մոտ պատկերը հասկանալու համար կարևոր է ուսումնասիրել դրա գծով ապահովագրավճանների գումարը, այդ թվում սուբսիդավորված գումարը, դրանց գծով վերաապահովագրության փոխանցված գումարը, այդ ապահովագրության տեսակի համար սահմանված չհատուցվող գումարը կամ ֆրանշիզան, ռիսկի առավելագույն ծածկույթը կամ ապահովագրական գումարը, իրականացված հատուցումների գումարը, այդ թվում՝ վերաապահովագրողների կողմից տրված հատուցումները: Այլապես, ներկայացված աղյուսակների ցուցանիշների համախմբով հնարավոր չէ պատկերացում կազմել ընկերությունների ֆինանսական կայունության և գյուղերքի ապահովագրության արդյունավետության մասին:

14) Անդրադառնալով 118-րդ էջում առաջարկվող «ապահովագրական գործընթացի ֆինանսական կայունության գնահատման ցուցանիշին՝ արտահայտված գյուղատնտեսական ապահովագրությանն առնչվող այլընտրանքային օգուտների և հավաքագրող ապահովագրավճարների հարաբերակցությանը», հարկ է նշել, որ դրանում կա ընդամենը գաղափար, որի աղբյուրը հեղինակը նշել է: Մինչդեռ այն նորույթ համարվել չի կարող, քանի որ դրա համար հարկ կլինի մշակել դրա գործնական կիրառման մատրիցը:

Նախ այն, որ առաջարկվող անվանումը՝ «ապահովագրական գործընթացի ֆինանսական կայունության գնահատման ցուցանիշ», չի համապատասխանում դրա էությանը: Այն իրականում կարող է հանդիսանալ ապահովագրողների կողմից գյուղերքի ապահովագրության ռիսկի ստանձման գործիք, դրա համապատասխան մատրիցով, որն անհրաժեշտ է մշակել: Մի կարևոր հանգամանք ևս, դրա կիրարկման համար հարկ չկա ստեղծել առաջարկվող գյուղապահովագրության հատուկ բյուրո, այն կարող է իրականացնել ցանկացած ապահովագրող և ապահովագրողների միությունը (ասոցիացիան) իր գործառույթների շրջանակում կամ որոշ շահագրգիռ ընկերություններ, որն ըստ ցանկության կարելի է թեկուզ բյուրո անվանել: Ի դեպ հարկ է նշել, անհնար է պատկերացնել, թե ինչ է արտահայտելու գյուղատնտեսական ապահովագրությանն առնչվող այլընտրանքային օգուտների և հավաքարգրվող ապահովագրավճարների հարաբերակցությունը, սակայն մի բան պարզ է, որ այն «ապահովագրական գործընթացի ֆինանսական կայունության գնահատման ցուցանիշ» անվանելու համար պետք է ունենալ անսահմանափակ երևակայություն:

Ընդհանրապես տնտեսագիտության մեջ որևէ խնդրի առումով այլ հարակից անուղղակի օգուտների հաշվի առնելու խնդիրը ընդունված մոտեցում է, սակայն խնդիրը նրանում է, որ դրա քանակական հաշվարկումը չափազանց բարդ խնդիր է:

Թվարկած այլընտրանքային օգուտների /ճիշտ կլինի ասել՝ «հարակից անուղակի օգուտների»/ գործոնները, այն է, օրինակ՝ գյուղվարկերի սուբսիդավորումը, գյուղերքի ապահովագրության ապահովագրավճարի սուբսիդավորումը և հեղինակի այլ թվարկածները, իսկապես կարող են որոշակի ազդեցություն ունենալ գյուղերքի ապահովագրության ռիսկի կառավարման վրա, ամբողջ հարցը նրանում է, թե ինչ չափով: Այդ գործոնների գործնական կիրառության համար պետք է, առաջինը, ստանալ դրանց անուղղակի ազդեցության չափելի մեծությունները՝ թվային արտահայտությամբ, որի մասին հեղինակը ոչինչ չի ակնարկում և չի առաջարկում: Երկրորդ, եթե անգամ նշված թվային մեծությունները ինչ որ ձևով դուրս բերվեն, հարց է առաջանում, թե դրանցից յուրաքանչյուրը ինչ ինտենսիվությամբ է ազդում գյուղերքի ապահովագրության ռիսկի կառավարման վրա: Օրինակ՝ գյուղերքի ապահովագրողի ապահովագրավճարների

սուբսիդավորումը ռիսկի կառավարման վրա ուղղակի ձևով չի ազդում, այն բարձրացնում է ֆերմերների և գյուղացիական տնտեսությունների ապահովագրվելու մատչելիությունը և, մյուս կողմից, նպաստում է ապահովագրական փուլի ձևավորմանը, քանի որ ապահովագրությունը դա համասեռ կամ միատարր մեծ փուլի ձևավորում է: Մյուս կողմից, գյուղվարկերի տոկոսադրույքերի սուբսիդավորումը գյուղբերքի ապահովագրվող ռիսկերի վրա որևէ կերպ չի ազդում, այն ազդում է ֆերմերների և գյուղացիական տնտեսությունների ծախսերի նվազեցման կամ եկամուտների ավելացման վրա: Ֆերմերների կամ գյուղացիական տնտեսությունների համապարփակ, այլ ոչ թե առանձին ռիսկերի ապահովագրության դեպքում այն կարող է առավել էական նշանակություն ունենալ: Հետևապես, յուրաքանչյուր անուղղակի ազդող գործոնին պետք է տրվի ազդեցության կշիռ, արտահայտված գործակցով, օրինակ՝ ապահովագրավճարի սուբսիդավորմանը տրվում է պայմանական 0,7 գործակից, իսկ գյուղվարկերի տոկոսադրույքերի սուբսիդավորմանը 0,3 գործակից. Ընդ որում, այդ գործակիցների մեծությունը պետք է հիմանվորել: Եթե համապատասխան հաշվարկման մատրիցով ստացվեն վերը նշված գործոնների ազդեցության թվային մեծությունները, ապա այնուհետև հարկ կլինի դրանք ճշգրտել նշված գործակիցներով: Նշված մատրիցի և քայլերի հերթականության մշակման դեպքում միայն կարելի ասել, որ առաջարկված գաղափարը ստացել է կիրառական բնույթ և այն կարելի է գործնականում կիրառել: Այդ պարագայում կարող ենք ասել, որ օրինակ՝ Շիրակի մարզի ֆերմերների համար գյուղբերքի ապահովագրության ապահովագրավճարները կամ դրույքաչափը կլինի ավելի բարձր քան Արարատյան դաշտավայրի ֆերմերներինը (կամ հակառակը):

Կրկին շեշտենք, որ մշակված գնահատման մատրիցը կհանդիսանա գյուղբերքի ապահովագրության ռիսկ ստանձնելու և համարժեք դրույքաչափ կամ ապահովրավճար սահմանելու համար գործիք, և ոչ թե վերացական «ապահովագրական գործընթացի ֆինանսական կայունության գնահատման ցուցանիշ», քանի որ հարց է առաջանում, իսկ որն է «ապահովագրական գործընթացի ֆինանսական կայունությունը» (շեշտադրումը «գործընթաց» բառի վրա է), հետո միայն առաջարկել, թե ի՞նչպես այն գնահատել կամ ըստ հեղինակի դրա վրա ազդել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արտակ Արտուշի Մարտիրոսյանի «Գյուղատնտեսության ապահովագրության ներդրման արդյունավետության գնահատման մոտեցումները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը ինքնուրույն և ամբողջական հետազոտություն է:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակվել են 7 գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևոր դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, Արտակ Արտուշի Մարտիրոսյանի «Գյուղատնտեսության ապահովագրության ներդրման արդյունավետության գնահատման մոտեցումները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսությունների ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը բարեհաջող պաշտպանության դեպքում արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ներկայացված Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ:

Նիստի նախագահ՝
Հայ-Ռուսական համալսարանի
«Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի պրոֆեսոր,
տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝

Է. Մ. Սանդյան

Հայ-Ռուսական համալսարանի
«Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի վարիչ,
տնտ. գիտ. դոկտոր, դոցենտ՝

Մ. Տ. Ոսկանյան

Հայ-Ռուսական համալսարանի
«Տնտեսագիտության տեսության
և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների»
ամբիոնի վարիչ, տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ՝

Ի. Բ. Պետրոսյան

Հայ-Ռուսական համալսարանի
«Էկոնոմիկայի և ֆինանսների»
ամբիոնի դոցենտ, տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ՝

Ա. Վ. Քառյան

Հայ-Ռուսական համալսարանի
գիտական քարտուղար,
բան. գիտ. թեկնածու՝



Ռ. Ս. Կասաբարովա